

ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՆԻ
ՆՈՐԵԳԻՒՑ ԽՈՍՔԵՐԻ.

* * *

Լոնգոնում այս օրերս լոյս է տեսել մի փոքր գրքայի, որ խիստ հետաքրքրական է ամրող քրիստոնեայ աշխարհի համար: Այդ գրքոյիը մի ձեռագիր պապիրուսի հրատարակութիւն է, որ գըտել են Եգիպտոսում: Գրենֆելլ և Գենտ գիտնականները և որը պարունակում է իւր մէջ Փրկչին վերադրած խօսքեր: Այդ պապիրուսի երկու երեսի վերայ գրած են ուժ խօսք, որոնցից չորրորդը և ուժերորդը կտրտուած ծայրերին գրած լինելով՝ անչնարին է եղել նոցա իմաստը վերականգնել: իսկ հինգերորդի մէջ մի քանի բառ պակաս է: մնացեալներն են:

1. . . . «Ե այն ժամանակ պարզ կտեսնես, ինչպէս հանել շիւղը քո եղբօր աչքից»:

2. «Յիսուս ասում է. Եթէ չէք պահում դեպի աշխարհը, (այս գարձուածքը յունարէն բնադրի մէջ շատ մմին է: անզիւերէն թարգմանիչը կարծում է, թէ այդ նշանակում է՝ հրաժարուել աշխարհից), դուք բնաւ չէք գտնի Աստուծոյ Արքայութիւնը, և եթէ դուք չէք պահում շարաթը, դուք չէք տեսնի Հօրը»:

3. «Յիսուս ասում է. Ես կանգնած էի աշխարհի մէջ, և նոքա ինձ տեսան մարմնով, և Ես գտայ բոլորին հարբած և ոչ ոքին նոցա մէջ շգտայ Ես ծարաւի, և Իմ հոգիս ցաւում է մարդկանց որդոց համար, որովհետև նոքա կոյր են իւրեանց սրտերով»:

5. «Յիսուս ասում է. Ուր . . . և այնտեղ . . . մէկը, Ես նորա հետ եմ: Բարձրացրու քարը և դու կդանես ինձ, ձեղքիր ծառը և Ես այնտեղ եմ գտնուում»:

6. «Յիսուս ասում է. Մարդարէն չի ընդունուում իւր հայրենիքում, ինչպէս և բժիշկը չի կարող բժշկի նոցա, որոնք նորան ճանաչում են»:

7. «Յիսուս ասում է. Քաղաքը, որ շինուած է բարձր բլուրի գագաթի վերայ և հաստատուած, շի կարող ընկնել կամ ծածկուած լինել»:

Սոցանից երեսում է, որ մի քանիսը այս խօսքերից համեմատ են աւետարանի խօսքերին, իսկ միւսները միանգամայն նոր են:

Գիտնական հրատարակիչների Ենթագրութեամբ գտնուած ձեռագիրը երկրորդ գարի վերջերին գըրած պէտք է լինի և Քրիստոսի խօսքերի մի անյայտ ժողովածուի մի մասն է կազմում»:

Գրքոյիը հրատարակուած է երկու տեսակ՝ մէկը լատինական և միւսը յունական տառերով. դորան կցած է և անզիւերէն թարգմանութիւնը շատ կարեոր ծանօթութիւններով:

* * *

ԵԿԵՂԵՅԱԿԱՆ ՔՐԹՆԵԿԱՌՆ

* * *

ԿԱԹՈԼԻԿԱԿ ԵԿԵՂԵՑԻ:

Սրբացման կարող կարողի եկեղեցու մէջ. — Մեզանից իւրաքանչիւրը կարդալով այս վերնագիրը պիտի մտածի. Բնչ կարգ. եթէ մարդը սուրբ և առաքինի կեանք է ունեցել, չի խնայել ոչինչ եկեղեցու քրիստոնէութեան համար: Կամ չարչարուել ու մահ է ընդունել Յիսուսի անուան համար: Նա արդէն սուրբ է: Կաթոլիկ եկեղեցին գործին այնպէս չի նայում: Նա սրբացման գործի համար որոշ կանոններ է դրել, գրագրական յայտնի արարողութիւններ սահմանել, թղթեր ու քննութիւններ: Որոնք պիտի վաւերացուին կնիքներով ու մարկաներով և պիտի վճարուին որոշեալ գումարներ, նայելով թէ թուղթը ինչ կարեւութիւն ունի: Ուրեմն մարդուն սրբոց կարգը մտնելու համար անհրաժեշտ է մի պատկառելի գումար առ նուազն 2,000,000 ֆրանկ: Այն ոսկին, որը նա գուցէ արհամարհել է կենդանութեան ժամանակ, նրան սրբոց կարգը գասելու ամենահական պայմանն է հանդիսանում: Սրբացման գործի համար 500 սոկի պէտք է վճարել Աւտիկանին, 1000 սոկի հանդիսակատարութեան համար, բոլոր բարձրաստիճան հոգևորականները իրենց բաժինը պիտի ստանան առատութեամբ, բայց այդ շատ չնշին բան է. զիսաւոր ծախսը „Promotore delle fede“-ի վերայ է գնում: Դա մի տիտղոս է, որ տրուում է այն անձանց, որոնց պաշտօնն է հաւաքել և ի ըստ ընծայել սրբացուի վարքին ու առաքինութեան վերայ ստուեր ձգող իրողութիւններ: Դրանց նաև լազիր անուանում են: Կեկի փաստաբաններ, իսկ եկեղեցին կոչում է «հաւատոյ դատախազներ», Ոչ միայն այդ քրոմուու-ները առատ վարձատրուում են, այլ և նոցա օգնականներն ու ծառաները, Սրբացման գործը շատ ծանր է յառաջ գնում և իւրաքանչիւր քայլ միայն փողի ուժով է կատարուում: Շատ անգամ պատահում է, որ թեմը կամ հասարակութիւնը, որ աշխատում էր այս կամ այն անձի սրբացման համար, ընդհատում է նուիրատուութիւնը, այն ժամանակ նոցա կանդիտատի թղթերի վերայ գրուում է „ad huc dormiant“ մինչև այժմ քննում է: Ոչ միայն ընտանիքներ, այլ և հասարակութիւններ և թեմեր նիւթապէս քայլքայում են, մինչև որ իրենց ընտրեալին սըրբոց կարգն են հասցնում:

Վատիկանի օրէնսգրքում մանրամասն որոշուած է սրբացման գործունեութեան կարգը: Երբ մի թեմում մեռնում է առաքինի անձն, և ժողովուրդը ընտրում է նրան իրենց համար սրբացու, թեմի եպիսկոպոսը հոգևորականներից ժողով է կազմում և քննուում են հանդուցեալի անցեալը.